

չեւ օրս, տունին անյայտ ալքերուն խորը, անձեռնմխելի, ոչ ոքի ծանօթ, բայց որուն հոտը բաւ էր ներս քաշելու դուրսի ոսկին: Ինչո՞ւ է: Գուրբ այդ կողմերու բոլոր արտերուն մէջ ընտանի գիւտ մըն էր դեռ իմ օրերուս, բայց ոսկի՞ն: Ան ալ թող մտածէ հեքիաթը: Բարգաւաճ՝ այդ տո՞ւնը, պապերուն ամբողջ գիծովը: Բարբարոսները քանի՛ անգամ կրակի են տուած այդ գեղը. ծերերուն յիշողութիւնը կ'ապրի թոռնէ թոռ: Բայց կրակը գացած մարած է անոր պատերուն չրթներուն: Ու հաւանաբար միջամտած ալ է աւանդութիւնը, յարգելու համար Աստուծոյ աջով հովանաւոր օճախը, երբ նոյն այդ մարգերուն համար ականատեսի քրոնիկներ կը պատմեն անհուն աւերած ու անպատում սպանդ: Ինչո՞ւ եւ ինչպէ՞ս յարգած են թուրքերը սա հրաշքը. անոնք, որ սրտի մեծ գոհունակութեամբ տառը տառին գործադրած են արիւնին ու կրօնքին պատգամները, չձգելով մարդ այդ գիւղին մէջ, որ կուշտ հաց ունենայ տարին գոնէ քանի մը ամիս. գրաւելով դարէ դար ցորենն ու գարին, այնքան անուանի ճախճախուտի եզրերու արտերէն, պետական, անհատական, յերիւրեալ պարտքերու փոխարէն: Իմ օրիս, բնակարան չկար, որ հիմէն չըլլար գրաւի տակ: Այն որ կը մտնէր այդ մեռելաստանը, ցած ու խեղճ տանիքներով անհուն լքում, ախտաւէտ ամառ ու աշուն թելադրող, տարօրէն կը զգար մեծ վայելուչ գրաւչութիւնը գիւղապետին բնակարանին. «ապրանքի մը պէս մեծ», ինչպէս կ'ողբայ մեր բանաստեղծներէն մէկը իր հայրենի տան յիշատակը: ԺԹ⁰⁰ դարը մեր պատմութեան ամէնէն փաստառատ դարն էր: Եւ սակայն որքան քիչ բան գիտենք մեր տանուտէրներուն հեքիաթէն, զոր կը յաւակնէինք հասկնալ քիչ մը վաղածանօթ բարիքներուն գնովը, օսմանեան բարեխնա՛մ կառավարութեան կողմէ այնքա՛ն հայրաբար շռայլուած մեզի: Ու որքան քիչէն աւելի ճիղճ է մեր գիտցածը ԺԵ. ԺԸ. դարերու ու ԺԹ⁰⁰ին առաջին կէսերուն այնքան բարգաւաճ մեր իշխաններուն ապրումներէն: Երեմիայի Չէլչպի օրագրութիւնը, Դարա-